ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ (ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ)

Հետամտում

ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՎԱԽԻՑ
ՊԱՇՏՊԱՆՎԱԾ
ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Ստամբուլյան կոնվենցիա, CETS No. 210) անդրադառնում է գենդերային բռնության տարբեր ձևերին, որոնք սահմանվում են որպես «բռնություն, որն ուղղված է կնոջ դեմ նրա կին լինելու պատճառով, կամ որը կանանց նկատմամբ դրսևորվում է անհամաչափորեն» (Հոդ. 3դ):

Վախն ու տագնապը ուղեկցում են հետամտվող կնոջը առօրյա կյանքում, իսկ դրան դիմակայելու փորձը խանգարում է նրա աշխատանքին, անձնական հարաբերություններին, երեխաներին խնամելիս և այլուր: Հետամտման տուժողների համար չափազանց դժվար է վերջ տալ դրան և արդարություն փնտրել: Եվրոպայի խորհրդի անդամ որոշ պետությունների քրեական և քաղաքացիական իրավունքում հետամտման համար պատիժ չի նախատեսված: Հետամտում բառը բացակայում է շատ լեզուներում, որը ցույց է տալիս, թե որքան քիչ է ճանաչված այդ հասկացությունը՝ ներկայում և անցյալում:

Քաջ գիտակցելով այդ խնդիրը Ստամբուլյան կոնվենցիան առաջինն է, որ առաջարկում է հետամտման դեմ պայքարելու և տուժողներին աջակցելու մի շարք միջոցներ: Հույս կա, որ կոնվենցիան ուժի մեջ մտնելուց և ազգային մակարդակով կիրառվելուց հետո իրական պաշտպանություն կապահովի հետամտման ենթարկվող անձանց համար:

ՀԵՏԱՄՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՏՈՒԿ ՔՐԵՈՐԵՆ ՊԱՏԺԵԼԻ ԱՐԱՐՔ

Նախ, կոնվենցիան հստակեցնում է, որ հետամտումը կանանց նկատմամբ բռնության ձև է: Թեև Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների տվյալները տարբեր են, սակայն հայտնի է, որ հետապմտման շատ տուժողներ կանայք են, իսկ իրավախախտներից շատերը՝ տղամարդիկ: Հաճախ կանանց հետամտում են այն բանից հետո, երբ հարաբերությունները, որոնք հաճախ ուղեկցվել են բռնությամբ, ավարտվում են: Հետամտման այս տեսակն ակնհայտորեն ունի գենդերային բնույթ, քանի որ խոսքը գերակայության և վերահսկողության մասին է: Կանայք նաև հաճախ հետամտվում են այն տղամարդկանց կողմից, որոնց հետ նրանք երբեք հարաբերություններ չեն ունեցել: Սակայն, հետամտողը, սովորաբար, կնոջ համար օտար անձ չէ և կինը ճանաչում է նրան:

Երկրորդ՝ ազգային օրենսդրությունը պետք է բավարար կառուցակարգեր նախատեսի հետամտման դեմ պայքարելու համար: Քանի որ առանց օրենքի պատիժ չի կարող լինել, կոնվենցիան բոլոր մասնակից պետություններից պահանջում է սահմանել հետամտման համար առանձին քրեական հոդված: Դա նշանակում է, որ կոնվենցիան վավերացնող պետությունը պետք է քրեականացնի հետամտման ակտը, որը սահմանվում է որպես «բազմիցս այլ անձի նկատմամբ սպառնալից վարքագծի դրսևորում, ինչը վերջինիս մոտ վախ է առաջացնում իր անվտանգության համար»: Սակայն քննարկումների ընթացքում որոշ անդամ պետություններ գերադասեցին հետամտմանման համար նախատեսել ոչ քրեական պատժամիջոցներ, այնուամենայնիվ, սահմանելով այն որպես իրավախախտում: Այդ իսկ պատճառով, այս դրույթին վերապահում անելը հնարավոր է (Հոդ. 78 կետ 3):

▶ Կոնվենցիայի մշակողները կարևոր են համարել բոլոր դրույթները ձևակերպել գենդերային չեզոք լեզվով, այդ իսկ պատճառով հետամտման սահմանումը հղում է կատարում երկու սեռերի ընդհանուր անվտանգությանը: Սա նշանակում է, որ, սկզբունքորեն, կոնվենցիայի բոլոր դրույթները կիրառելի են և՛ կանանց և՛ տղամարդկանց համար: Դա համահունչ է քրեական իրավունքի նկատմամբ անդամ պետությունների մեծ մասի մոտեցմանը. քրեորեն պատժելի արարքների սահմանումները սովորաբար ձևակերպվում են գենդերային չեզոք լեզվով և կիրառելի են ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց առումով:

▶ Հետամտումը որպես առանձին քրեորեն պատժելի արարք դիտարկելու տրամաբանությունն այն է, որ քրեական դատարաններին թույլ տրվի սահմանել հետամտման բնորոշ վարքագիծ: Առանձին վերցված հետամտման տարրերը, օրինակ՝ անձին անցանկալի հաղորդագրություններ ուղարկելը, առանց հրավիրվելու նրա տուն կամ աշխատավայր այցելելը, ընկերներին և ընտանիքին զանգահարելը կամ որևէ այլ բան, որ հետամտող անձն անում է, միշտ չէ, որ հատում է հանցավոր վարքագիծ համարվելու շեմը: Արարքին հանցավոր բնույթ է հաղորդում հետամտողի գործելակերպը, մտադրություններն ու այն վախը, որ նա առաջացնում է: Հարկադրանքի կամ անձի նկատմամբ սահմանազանցության քրեորեն պատժելի արարքներն այդ ամենը չեն ներառում: Այս բացը լրացնելու համար շատ կարևոր է հատուկ իրավախախտման տեսակի սահմանումը:

▶ Հետամտումը որպես առանձին հանցագործություն որակավորելը խնդրի լուծման դեռ մի մասն է, քանի որ վերջինիս արդյունավետությունը մեծապես կախված է դրա կիրարկումից: Դատավորները և իրավապահ մարմինների ծառայողները պետք է վերապատրաստվեն՝ իմանալու, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկել հետամտման դեպքերում: Նրանք պետք է հասկանան, թե ինչ է իրականում հետամտումը: Այդ իսկ պատճառով կոնվենցիան պարունակում է հետամտման գործով քննության և դատական վարույթի բարելավման վերաբերյալ մի շարք դրույթներ: Նպատակն է քրեական վարույթի հիմքում դնել տուժողների իրավունքները, համոզվել, որ տուժողին ոչինչ չի սպառնում, ավելի արդյունավետ դարձնել հետաքննությունն ու քրեական հետապնդումը (Հոդ. 49):

ԱՐԳԵԼՈՂ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Երրորդ, հետամտման տուժողների համար կոնվենցիան նախատեսում է արգելող կամ պաշտպանական որոշումներ: Պետությունների մեծ մասում տեխնիկապես հնարավոր է դիմել քաղաքացիական դատարան՝ վերջ տալու անձի անթույլատրելի վարքագծին, սակայն հետամտումների պարագայում այս գործիքը հազվադեպ է կիրառվում: Կոնվենցիան պահանջում է, որ մասնակից պետությունները ապահովեն, որ արգելող կամ պաշտպանական որոշումները հասանելի են կոնվենցիայով նախատեսված բռնության բոլոր ձևերի դեպքում, այդ թվում՝ հետամտման ենթարկվող անձանց նկատմամբ: Քրեական վարույթը չի կարող հետ պահել հետամտողին, այդ իսկ պատճառով կարևոր է ապահովել տուժողի անվտանգությունը: Կոնվենցիան երաշխավորում է, որ դատարանը կարող է որոշում կայացնել հարկադրելու հետամտողին դադարեցնել իր անթույլատրելի վարքագիծը և հեռու մնալ տուժողից: Նման որոշումների ցանկացած խախտում պետք է ենթադրի քրեական կամ այլ իրավական պատասխանատվության:

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վերջում, մի քանի խոսք աջակցության ծառայությունների մասին: Կոնվենցիան պահանջում է անդամ պետություններից մասնագիտացված աջակցության ծառայություններ ստեղծել կոնվենցիայով նախատեսված ցանկացած տեսակի բռնության, այդ թվում՝ հետամտման ենթարկված անձանց համար: Ինչպես բռնաբարության, հարկադիր ամուսնության կամ բռնության այլ ձևերի տուժողները՝ հետամտման ենթարկվող անձինք ևս խորհրդատվական ծառայությունների աջակցության կարիք ունեն: Անդամ պետությունն ինքն է որոշում, թե ինչպես է դա արվելու, սակայն տուժողներին պետք է հասանելի լինի հեռախոսահամար, որին նրանք կարող են զանգահարել և ուղղորդվել մի վայր, որտեղ կարող են օգնություն ստանալ (Հոդ. 22, 24):

Լրացուցիչ տեղեկությունների համար
խնդրում ենք այցելել
www.coe.int/conventionviolence
կամ կապ հաստատել
conventionviolence@coe.int

Prems 024024

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքի առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է: Այն ներառում է 46 անդամ պետություն՝ ներառյալ Եվրամիության բոլոր անդամները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որը նախատեսված է մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանության համար: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որը նախատեսված է մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանության համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրավակիրառումը անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE